ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 1-Ա**
**22 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թ.**

## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 1 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը նիստի օրակարգը հաստատելու մասին, ***համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել Կապան համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 22-ի թիվ 1 արտահերթ նիստի օրակարգը.

1. Կապան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 129-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 05-ի N 107-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին
3. Կապան համայնքի Կապան քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող գույքը՝ Մ. Պապյան փողոցի թիվ 8/38 հասցեում գտնվող 105.2 քառ. մ հասարակական նշանակության տարածքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին
4. Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու և 0.0671 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին
5. Կապան համայնքի վարչական սահմաններում գտնվող, «անհայտ» քաղաքացու որպես սեփականություն փոխանցված հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

6. Կապան համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, համայնքի կապան քաղաքի Բաղաբերդ թաղամասի թիվ 2/3 հասցեում գտնվող տարածքի բնակավայրերի նշանակության 0.00332 հա հողամասը ուղղակի վաճառքի միջոցով Էդգար Առաքելյանին օտարելու մասին

7. Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Ծավ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը հավանություն տալու մասին

**Կողմ( 13 )՝**

| | |
|---|---|
| **ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ** | **ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՆԱՍ** |
| **ԱՄՐՅԱՆ ՎԱՉԵ** | **ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ** |
| **ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ** | **ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ** |
| **ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ** | **ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ** |
| **ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ** | **ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ** |
| **ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ** | **ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ** |
| **ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ** | |

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ**

***2020թ. հունվարի 22***
***ք. Կապան***

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ N 2-Ն
**22 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թ.**

### ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 129-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5)-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4)-րդ մասով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է.***

Կապան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Կապան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 129-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ ու լրացումներ և հաստատել հավելվածների աղյուսակների հետևյալ ցուցանիշները՝

1) Որոշման 2-րդ կետի՝ «Համայնքի բյուջեի եկամուտները» թիվ 1 հավելվածում, համաձայն հավելված 1-ի:

2) Որոշման 3-րդ կետի՝ «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման» թիվ 2 հավելվածում, համաձայն հավելված 2-ի:

3) Որոշման 4-րդ կետի՝ «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման» թիվ 3 հավելվածում, համաձայն հավելված 3-ի:

4) Որոշման 7-րդ կետի՝ «Համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման» թիվ 6 հավելվածում, համաձայն հավելված 4-ի:

**Կողմ( 13 )՝**

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՆԱՍ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

***2020թ. հունվարի 22***
***ք. Կապան***

Հավելված 1
Կապան համայնքի ավագանու
<< 22 >> հունվար 2020թ. թիվ 2-Ն որոշման

# ՀԱՏՎԱԾ 1

**Կապան համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ 129-Ն որոշման թիվ 1 հավելվածում կատարվող փոփոխություններ**

(հազար դրամով)

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Ընդամենը (ս.5+ս.6) | Ցուցանիշների փոփոխությունը /ավելացումները նշված են դրական նշանով, նվազեցումները բացասական նշանով/ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300) | | 54181,60 | | 54181,6 |
| | այդ թվում՝ | | | | |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 7300 | 54181,6 | | 54181,6 |
| | այդ թվում՝ | | | | |
| 1260 | 2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից | 7332 | 54181,6 | | 54181,6 |
| | այդ թվում՝ | | | | |
| 1261 | ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | 54181,6 | | 54181,6 |

*Աշխատակազմի քարտուղար* *Նելլի Շահնազարյան*

Հավելված 2
Կապան համայնքի ավագանու
<< 22 >> հունվար 2020թ. թիվ 2-Ն որոշման

# ՀԱՏՎԱԾ 2

## Կապան համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ 129-Ն որոշման թիվ 2 հավելվածում կատարվող փոփոխություններ

(հազար դրամներով)

| Տողի NN | Բա-ժին | Խում բ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը (ս.7+ս.8) | Ցուցանիշների փոփոխությունը /ավելացումները նշված են դրական նշանով, նվազեցումները բացասական նշանով/ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 2000 | X | X | X | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** (տող2100+տող2400+տող2500+տող2600+տող2800+տող 2900+տող3000+տող3100) | 54181,6 | 0,0 | 54181,6 |
| 2100 | 01 | 0 | 0 | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ** (տող2110+տող2130+տող2160) | 3000,0 | 3000,0 | |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2130 | 01 | 3 | 0 | *Ընդհանուր բնույթի ծառայություններ* | 3000,0 | 3000,0 | |
| | | | | որից՝ | | | |
| 2133 | 01 | 3 | 3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 3000,0 | 3000,0 | |
| 2600 | 06 | 0 | 0 | **ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ** | 54181,6 | | 54181,6 |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2610 | 06 | 1 | 0 | *Բնակարանային շինարարություն* | 54181,6 | | 54181,6 |
| | | | | որից՝ | | | |
| 2611 | 06 | 1 | 1 | Բնակարանային շինարարություն | 54181,6 | | 54181,6 |
| 3100 | 11 | 0 | 0 | **ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ** | -3000,0 | -3000,0 | |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 3110 | 11 | 1 | 0 | *ՀՀ կառավարության և համայնքների պահուստային* | -3000,0 | -3000,0 | |
| | | | | որից՝ | | | |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | -3000,0 | -3000,0 | |

*Աշխատակազմի քարտուղար* [signature] *Նելլի Շահնազարյան*

Հավելված 3
Կապան համայնքի ավագանու
<< 22 >> հունվար 2020թ. թիվ 2-Ն որոշման

# ՀԱՏՎԱԾ 3

**Կապան համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ 129-Ն որոշման թիվ 3 հավելվածում կատարվող փոփոխություններ**

(հազար դրամներով)

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը (ս.5+ս.6) | Ցուցանիշների փոփոխությունը /ավելացումները նշված են դրական նշանով, նվազեցումները բացասական նշանով/ վարչական մաս | ֆոնդային մաս |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող4050+տող5000+տող 6000) | | **54181,6** | **0,0** | **54181,6** |
| | այդ թվում՝ | | | | |
| 4050 | **Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝** | x | 0 | 0 | |
| | այդ թվում՝ | | | | |
| 4400 | **1.4. ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ** (տող4410+տող4420) | x | 3000 | 3000 | |
| | այդ թվում՝ | | | | |
| 4420 | *ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ* | | 3000 | 3000 | |
| | որից՝ | | | | |
| 4421 | -Սուբսիդիաներ ոչ պետական ոչ-ֆինանսական կազմակերպություններին | 4521 | 3000 | 3000 | |
| 4700 | ***1.7. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ*** | x | -3000 | -3000 | |
| | այդ թվում՝ | | | | |
| 4770 | ***ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ*** *(տող4771)* | x | -3000 | -3000 | |
| | որից՝ | | | | |
| 4771 | -Պահուստային միջոցներ | 4891 | -3000 | -3000 | |
| 5000 | **Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ** (տող5100+տող5200+տող5300+տող5400) | x | **54181,6** | | **54181,6** |
| | այդ թվում՝ | | | | |
| 5100 | **1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ** (տող5110+տող5120+տող5130) | x | **54181,6** | | **54181,6** |
| | այդ թվում՝ | | | | |
| 5110 | ***ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ*** *(տող5111+տող5112+տող5113)* | x | **54181,6** | | **54181,6** |
| | որից՝ | | | | |
| 5113 | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | **5113** | **54181,6** | | **54181,6** |

***Աշխատակազմի քարտուղար*** ***Նելլի Շահնազարյան***

Հավելված 4
Կապան համայնքի ավագանու
<< 22 >>հունվար 2020թ. Թիվ 2-Ն որոշման

# ՀԱՏՎԱԾ 6

## Կապան համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ 129-Ն որոշման թիվ 6 հավելվածում կատարվող փոփոխություններ

(հազար դրամներով)

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Ընդամենը (ս.7 +ս.8) | Ցուցանիշների փոփոխությունը /ավելացումները նշված են դրական նշանով, նվազեցումները բացասական նշանով/ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2400+տող2500 տող2700+տող2800+տող2900+տող3000+տող3100) | 54181,6 | 0,0 | 54181,6 |
| 2600 | 06 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 54181,6 | | 54181,6 |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2100 | 01 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2110+տող2130+տող2160) | 3000,0 | 3000,0 | |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2130 | 01 | 3 | 0 | *Ընդհանուր բնույթի ծառայություններ* | 3000,0 | 3000,0 | |
| | | | | որից՝ | | | |
| 2133 | 01 | 3 | 3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 3000,0 | 3000,0 | |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝ | 3000,0 | 3000,0 | |
| | | | | Ա.ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝ | 3000,0 | 3000,0 | |
| | | | | 1.4. ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ | 3000,0 | 3000,0 | |
| | | | | այդ թվում՝ | | | |
| | | | | *ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ* | 3000,0 | 3000,0 | |
| | | | | որից՝ | | | |
| | | | | -Սուբսիդիաներ ոչ պետական ոչ-ֆինանսական կազմակերպություններին | 3000,0 | 3000,0 | |
| 2610 | 06 | 1 | 0 | *Բնակարանային շինարարություն* | 54181,6 | | 54181,6 |
| | | | | որից՝ | | | |
| 2611 | 06 | 1 | 1 | Բնակարանային շինարարություն | 54181,6 | | 54181,6 |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝ | 54181,6 | | 54181,6 |
| | | | | Բ.ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ | 54181,6 | | 54181,6 |
| | | | | այդ թվում՝ | | | |
| | | | | 1.1ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ | 54181,6 | | 54181,6 |
| | | | | որից՝ | | | |

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Ընդամենը (ս.7 +ս.8) | Ցուցանիշների փոփոխությունը /ավելացումները նշված են դրական նշանով, նվազեցումները բացասական նշանով/ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 54181,6 | | 54181,6 |
| | | | | -Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 54181,6 | | 54181,6 |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող3110) | -3000,0 | -3000,0 | |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 3110 | 11 | 1 | 0 | ***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ*** | -3000,0 | -3000,0 | |
| | | | | որից՝ | | | |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | -3000,0 | -3000,0 | |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝ | -3000,0 | -3000,0 | |
| | | | | Ա.ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝ | -3000,0 | -3000,0 | |
| | | | | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ | -3000,0 | -3000,0 | |
| | | | | որից՝ | | | |
| | | | | -Պահուստային միջոցներ | -3000,0 | -3000,0 | |

***Աշխատակազմի քարտուղար*** [signature] ***Նելլի Շահնազարյան***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ N 3-Ն
## 22 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թ.

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 05-Ի N 107-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Կապան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 5-ի «Կապան համայնքում տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 107-Ն որոշման 9-րդ կետի 7-րդ ենթակետով հաստատված թիվ 3 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ **4**-րդ կետով.

1) «4. «Կապան քաղաքի մանկական կենտրոն» ՀՈԱԿ-ի ծառայություններից օգտվելու համար՝ տարեկան 3000 դրամ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ( 13 )՝**

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՆԱՍ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

***2020թ. <u>հունվարի 22</u>***
***ք. Կապան***

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 4-Ա**
**22 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թ.**

**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ՝ Մ.ՊԱՊՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 8/38 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 105.2 ՔԱՌ. Մ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ 21)-րդ կետով, հաշվի առնելով «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության 07.11.2019թ. թիվ ԱՀ–293 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ Մ.Պապյան փողոցի թիվ 8/38 հասցեում գտնվող 105.2 քառ.մ մակերեսով հասարակական նշանակության տարածքը 3 /երեք/ տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ կանոնադրությամբ նախատեսված գործունեությունը կազմակերպելու նպատակով:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ( 13 )՝**

**ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ** — **ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՆԱՍ**
**ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ** — **ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ**
**ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ** — **ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ**
**ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ** — **ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ**
**ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ** — **ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ**
**ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ** — **ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ**
**ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ**

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

***2020թ. հունվարի 22***
***ք. Կապան***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 5-Ա

22 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թ.

## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 0.0671 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1)-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ և հաշվի առնելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2020 թվականի հունվարի 10-ի թիվ 1/փ-1 դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի գլխավոր հատակագծում կատարել փոփոխություն և ֆիզիկական անձի սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների՝ «արդյունաբերական օբյեկտների» հողերից 0.03447 հա և բնակավայրերի նշանակության այլ հողերից 0.03263 հա հողամասերը (կադաստրային ծածկագիր 09-001-0511-0233) փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ «էներգետիկայի հողեր» գործառնական նշանակությամբ:

2. Համայնքի ղեկավարին՝

1) ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքի տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային

նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը,

2) սույն կետի 1-ին ենթակետով գանձված ֆինանսական միջոցներն ուղղել համայնքի բնակավայրերի հողերի օգտագործման սխեմաների կամ գլխավոր հատակագծերի կազմմանը։

**Կողմ( 13 )՝**

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՄՐՅԱՆ ՎԱՉԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՆԱՍ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

***2020թ. <u>հունվարի 22</u>***
***ք. Կապան***

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 6-Ա**
**22 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թ.**

**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, «ԱՆՀԱՅՏ» ՔԱՂԱՔԱՑՈՒ ՈՐՊԵՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» թիվ 186-Ն հրամանի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համայնքի վարչական սահմաններում գտնվող, «անհայտ» քաղաքացու որպես սեփականություն փոխանցված Կապան համայնքի Եղվարդ գյուղում 09-034-0014-0006 կադաստրային ծածկագրով 0.06925 հա հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

**Կողմ( 13 )՝**

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՆԱՍ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**
**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

*2020թ. <u>հունվարի 22</u>*
*ք. Կապան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 7-Ա**
**22 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թ.**

**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԱՂԱԲԵՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 2/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.00332 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԷԴԳԱՐ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Կապան համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, համայնքի Կապան քաղաքի Բաղաբերդ թաղամասի թիվ 2/3 հասցեում գտնվող տարածքի սպասարկման՝ բնակավայրերի նշանակության հողերից 0.00332 հա հողամասը /ծածկագիր 09-001-0103-0271/, որպես շինության սպասարկման հողամաս ուղղակի վաճառքի միջոցով օտարել Էդգար Առաքելյանին 17 530.0 /տասնյոթ հազար հինգ հարյուր երեսուն/ դրամ կադաստրային արժեքով:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ( 13 )՝**

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ
ԱՄՐՅԱՆ ՎԱՉԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՆԱՍ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

*2020թ. հունվարի 22*

*ք. Կապան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 8-Ա**
**22 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թ.**

**ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29)-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Ծավ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում առաջարկվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է համայնքի վարչական տարածքում գտնվող.

1) իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 0,74445 հեկտար վարելահողը /կադաստրային ծածկագրեր՝ 09-048-0211-0092, 09-048-0206-0011/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ էներգետիկայի օբյեկտների հողեր գործառնական նշանակությամբ՝ 0.5117 հեկտարը ՀԷԿ-ի կայանային հանգույց կառուցելու համար, 0.23275 հեկտարը՝ ՀԷԿ-ի գլխամասային հանգույց (ջրընդունիչ) կառուցելու համար:

2) պետական սեփականություն հանդիսացող, անտառային հողերի <<անտառներ>> հողատեսքից 0,10694 հեկտար /կադաստրային ծածկագրեր՝ 09-048-0206-0009-ից, 09-048-0207-0001-ից/ հողամասը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ էներգետիկայի օբյեկտների

հողեր գործառնական նշանակությամբ՝ ՀԷԿ-ի գլխամասային հանգույց (ջրընդունիչ) կառուցելու համար:

2. Համայնքի ղեկավարին՝ կազմել և օրենսդրությամբ սահմանված կարգով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործը:

**Կողմ( 13 )՝**

| | |
|---|---|
| ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ | ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՆԱՍ |
| ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԼԵՆ | ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ | ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ |
| ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ | ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ |
| ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ | |

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

*2020թ. հունվարի 22*
*ք. Կապան*